

3142

Ի. ՍՏԱԼԻՆ

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ՄԻՋԱԿԻ
ՀԵՏ ԴԱՇԻՆՔ
ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՐՅԸ



3K33

Լ-35

ՊԵՏԼՐՈՏ — ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1938



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻՍՅԵՒՔ

21 JUN 2005

ՅԿՅԾ
L-35 *my*

20 NOV 2009

Ի. ՍՏԱԼԻՆ

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ՄԻՋԱԿԻ ՀԵՏ
ԴԱՇԻՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՐՑԸ

Պատասխան ընկ. Ս.-ին

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1938

0 5 AUG 2013

3142

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ՄԻՋՍԿԻ ՀԵՏ ԴՍՇԻՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՐՑԸ¹

Պատասխան ընկ. Ս.—ին

Ընկե՛ր Ս.

Ճիշտ չե, թե Լենինի լողունը՝ «կարողանալ համաձայնության հասնել միջակ գյուղացիության հետ՝ մոչ մի բույն չհրաժարվելով կուլակի դեմ պայքարելուց ու ամբողջապես հենվելով միայն չքավորության վրա», մոր նա տվել է Պրատիբա Մորոկինի մասին գրած իր հայտնի հոդվածում, — իբր թե «չքավորական կոմիտեների ժամանակաշրջանի» լողունն է, «միջակ գյուղացիության այսպես կոչված չեղբայցման ժամանակաշրջանի վերջի» լողունն է: Սա բոլորովին սխալ է: Չքավորական կոմիտեները հիմնվել են 1918 թվականի հունիսին: 1918 թվականի հոկտեմբերի վերջին մենք արդեն ունեյինք մեր ուժերի գերակշռությունը գյուղում կուլակության դեմ ու միջակի շրջադարձի հորհրդային իշխանության կողմը: Հենց այդ շրջադարձի բազայի վրա ել ծագեց ԿԿ-ի վճիռը յերկիշխանությունը խորհուրդների ու չքավորական կոմիտեների միջև մոչնչացնելու մասին, դափառակալին ու գյուղական խորհուրդների վերընտրությունների մասին, չքավորական կոմիտեները նորընտիր խորհուրդներում լուծելու մասին ու, հետևաբար, չքավորական կոմիտեների լիկվիդացիայի մասին: Այս վորոշման խորհրդային ձևավորումն ընդունվեց, ինչպես հայտնի յե, 1918 թ. նոյեմբերի 9-ին խորհուրդների VI համագումարում: Յես նկատի ունեմ խորհուրդների VI համագումարի 1918 թ. նոյեմբերի 9-ի վորոշումը գյուղական ու դավառակալին խորհուրդների վերընտրությունների ու չքավորական



272
39

И. СТАЛИН

ЛЕНИН И ВОПРОС О СОЮЗЕ
С СЕРЕДНЯКОМ

Армгиз—Издательство полит. литературы,
Ереван, 1938

¹ Տպագրվում է միջանի կրճատումներով: Ի. Ստ.:

կոմիտեները խորհուրդներում լուծելու մասին: Իսկ յե՞րբ լույս տեսավ Լենինին՝ «Պիտիբիմ Սորոկինի արժեքավոր խոստովանությունները» հոդվածը, վորտեղ նա միջակի չե-
զոքացման լողունդի փոխարեն հռչակում է միջակի հետ հա-
մաձայնության գալու լողունդը: Այն լույս տեսավ 1918
թվականի նոյեմբերի 21-ին, այսինքն՝ խորհուրդների V
համագումարի այդ վորոշումից գրեթե յերկու շաբաթ հե-
տ: Այդ հոդվածում Լենինն ուղղակի ասում է, վոր միջա-
կի հետ համաձայնության գալու քաղաքականությունը թե-
լադրվում է միջակի շրջադարձով դեպի մեր կողմը: Ահա
Լենինի խոսքերը.

«Գյուղում մեր խնդիրն է՝ վոչնչացնել կալվածատիրոջը, կոտրել
շահադործող ու սպեկուլանտ-կուլակի դիմադրությունը. այս բանի հա-
մար մենք ամուր հենվել կարող ենք միայն կիսապրոլետարների վրա,
«չքաղվորության» վրա: Բայց միջակ գյուղացին մեզ թշնամի չէ: Նա
տատանվել է, տատանվում է և տատանվելու չէ. տատանվողները վրա
ներդործելու խնդիրը միատեսակ չէ շահադործողին տալովելու և ակ-
տիվ թշնամուն հաղթելու խնդրի հետ: Կարողանալ համաձայնության
հասնել միջակ գյուղացու հետ՝ վոչ մի բույն չհրաժարվելով կուլակի
դեմ պայքարելուց ու ամբապես հենվելով միայն քաղվորության
վրա—այս է մոմենտի խնդիրը, վորովհետև հենց այժմ, վերը շարա-
դրած պատճառների հետևանքով միջակ գյուղացիության շրջադարձը
դեպի մեր կողմն անխուսափելի չէ»¹ (Կ. XXIII, էջ 294):

Իսկ սրանից ի՞նչ է հետևում:

Իսկ սրանից այն է հետևում, վոր Լենինի լողունդը վե-
րաբերում է վո՛չ թե հին ժամանակաշրջանին, վո՛չ թե մի-
ջակի չեզոքացման ու չքավորական կոմիտեների ժամանա-
կաշրջանին, այլ նոր ժամանակաշրջանին, միջակի հետ հա-
մաձայնության գալու ժամանակաշրջանին: Այսպիսով, նա
արտացոլում է վո՛չ թե հին ժամանակաշրջանի վերջը, այլ
նոր ժամանակաշրջանի սկիզբը:

Բայց ձեր պնդումը Լենինի լողունդի մասին ճիշտ չէ
վո՛չ միայն ձևականորեն, վո՛չ միայն այսպես ասած՝ ժա-
մանակադրական տեսակետից,—այն ճիշտ չէ նաև ըստ եյու-
թյան: Հայտնի չէ, վոր միջակի հետ համաձայնության գա-
լու՝ Լենինի լողունդը, վորպես նոր լողունդ, համակուսակ-

յական հռչակում ստացավ մեր կուսակցության VIII համա-
գումարում (1919 թվականի մարտ): Հայտնի չէ, վոր կու-
սակցության VIII համագումարը հենց այն համագումարն է,
վորը հիմնավորեց միջակի հետ ամուր գաշինք ունենալու
մեր քաղաքականության հիմունքները: Հայտնի չէ, վոր
մեր ծրագիրը, Համկոմկուսի ծրագիրը, ընդունված է
նույնպես կուսակցության VIII համագումարում: Հայտնի
չէ, վոր այդ ծրագրում հատուկ կետեր կան կուսակցության
վերաբերմունքի մասին դեպի գյուղի տարբեր խմբավորում-
ները՝ դեպի չքավորությունը, դեպի միջակները, դեպի
կուլակությունը: Ի՞նչ է ասված Համկոմկուսի ծրագրի այդ
կետերում գյուղի սոցիալական խմբավորումների և դեպի
այդ խմբավորումները կուսակցության վերաբերմունքի մա-
սին: Լսեցեք.

«Գյուղում կատարած իր ամբողջ աշխատանքում ՌԿԿ առավել պես
հենվում է նրա պարլետարական և կիսապարլետարական շերտերի վրա,
նրանց կազմակերպում է ամենից առաջ վորպես ինքնուրույն ուժ,
ստեղծելով գյուղում կուսակցական ըջիջներ, քաղվորության կազմա-
կերպություններ, գյուղի պրոլետարների ու կիսապրոլետարների հա-
տուկ տիպի արհեստակցական միություններ և այլն, ումեն կերպ նրանց
մոտեցնելով քաղաքային պրոլետարիատին ու դուրս քաշելով նրանց
գյուղական բուրժուազիայի և մանր սեփականատիրական շահերի ազ-
դեցությունից:

Կուկալության, գյուղական բուրժուազիայի նկատմամբ ՌԿԿ քաղա-
քականությունը մի վճռական պայքար է նրանց շահագործողական
նկրտումների դեմ, խորհրդային քաղաքականության հանդեպ նրանց
ցուցաբերած դիմադրության մեջումն է:

Միջակ գյուղացիության նկատմամբ ՌԿԿ քաղաքականությունն
այն է, վոր աստիճանաբար ու պլանաչափ կերպով նրան ներդրվի սո-
ցիալիստական շինարարության աշխատանքի մեջ: Կուսակցությունն իրեն
խնդրի է դնում՝ նրան բաժանել կուլակներից, նրան բանվոր դասա-
կարգի կողմը դրավել ուշադիր վերաբերմունքով դեպի նրա կարիքները,
պայքարելով նրա հետամնացության դեմ գաղափարային ներդրմու-
թյան միջոցներով, բնավ յերբեք ճնշման միջոցներով, ձգտելով բոլոր
այն դեպքերում, վորտեղ շոչափված են նրա կենսական շահերը, գործ-
նական համաձայնությունների գալ նրա հետ, նրան դիմումներ անելով
սոցիալիստական փոխակերպությունների կենսագործման յեղանակներ
ուսմաննելու մեջ»¹ («ՌԿԿ VIII համագումար», սղագիր հաշվետվու-
թյուն, էջ 396):

1 Ընդգծումներն ամենուրեք իմն են: Ի. Ստ.:

1 Ընդգծումներն ամենուրեք իմն են: Ի. Ստ.:

Ապա մի փորձեցե՛ք դռները թեկուզ ամենափոքր, թեկուզ բառերի տարբերութիւնն ծրագրի այս կետերի և Լենինի լուսնադրի միջև: Իսկ այդպիսի տարբերութիւնն չէք դռնի, վորովհետև բնութիւնն մեջ գոյութիւնն չունի այն: Ինչ ասվելին: Վոչ մի կասկած չի կարող լինել, վոր Լենինի լուսնադրը վո՛չ միայն չի հակասում VIII համագումարի վորոշումներին միջակի մասին, այլ, ընդհակառակը, այդ վորոշումների ամենաճշգրիտ ու ամենահաջող ձևակերպումն է: Իսկ չե՞ վոր սա փաստ է, վոր Համկի ծրագիրն ընդունվել է 1919 թվի մարտին կուսակցութեան VIII համագումարում, վորը հատուկ կերպով քննարկել է միջակի հարցը, իսկ Պիտրիմ Սորոկինի դեմ ուղղված՝ Լենինի հոգովածը, վորը միջակի հետ համաձայնութեան գալու լուսնադրն է հուշակել, մամուլում յերևան է յեկել 1918 թ. նոյեմբերին, կուսակցութեան VIII համագումարից չորս ամիս առաջ:

Մի՞թե պարզ չէ, վոր կուսակցութեան VIII համագումարն ամբողջապես ու լիովին հաստատեց Լենինի այն լուսնադրը, վոր հուշակված է Պիտրիմ Սորոկինի դեմ ուղղված նրա հոգվածում, վորպես մի լուսնադր, վորով կուսակցութիւնը պարտավոր է դեկավարվել գլուխում կատարած իր աշխատանքում՝ սոցիալիստական շինարարութեան ներկա ամբողջ ժամանակաշրջանում:

Վո՞րն է Լենինի լուսնադրի աղը:

Լենինի լուսնադրի աղն այն է, վոր նա գարմանալի դեպքում կերպով ըմբռնում է գլուխում կատարելիք կուսակցական աշխատանքի յեռամիասնական խնդիրը, վորն արտահայտված է մի սեղմ ֆորմուլայով. ա) հեկվիբ չքափորութեան վրա, բ) համաձայնութիւն կայացրո՛ւ միջակի հետ, գ) վոչ մի բոպե մի՛ դադարեցնի պայքարը կուսակի դեմ: Ապա մի փորձեցե՛ք վերցնել այս ֆորմուլայից նրա մասերից մեկը վորպես բազա ամբողջ մոմենտում գլուխում կատարելիք աշխատանքի համար, մոռանալով նրա մնացած մասերը, — և դուք անպատճառ փակուղի կընկնեք: Արդյոք կարելի՞ չէ սոցիալիստական շինարարութեան ներկա փուլի պայմաններում իսկական ու ամուր համաձայնութիւն կայացնել միջակի հետ՝ առանց չքափորութեան վրա հենվելու և

առանց կուսակի դեմ պայքար մղելու: Չի կարելի: Կարելի՞ չէ արդյոք այժմյան զարգացման պայմաններում հաջող պայքար մղել կուսակի դեմ՝ առանց չքափորութեան վրա հենվելու և առանց միջակի հետ համաձայնութիւն ունենալու: Չի կարելի: Ի՞նչպես մի ընդհանրացնող լուսնադրով ամենից ամբողջ հաջող ձևով արտահայտել գլուխում կատարելիք կուսակցական աշխատանքի այս յեռամիասնական խնդիրը: Յես կարծում եմ, վոր Լենինի լուսնադրն այս խնդրի ամենից հաջող արտահայտութիւնն է: Հարկավոր է ընդունել, վոր Լենինից ամբողջ հաջող չես ասի...

Ինչո՞ւ չէ անհրաժեշտ Լենինի լուսնադրի նպատակահարմարութիւնն ընդգծել հենց այժմ, գլուխում կատարվող աշխատանքի հենց ամբողջ պայմաններում:

Այն պատճառով, վոր հենց այժմ է նկատվում առանձին ընկերների հակումը՝ մաս-մաս անել գլուխում կատարելիք կուսակցական աշխատանքի յեռամիասնական խնդիրը և այդ մասերն իրարից անջատել: Սա ամբողջապես հաստատվել է այս տարվա հունվար-փետրվարի մեր հացամթերման կամպանիայի պրակտիկայով: Վոր միջակի հետ հարկավոր է համաձայնութիւն հաստատել — այս գիտեն բոլոր բուլղերիկները: Բայց թե ինչպես հաստատել այդ համաձայնութիւնը — այս ամեն վոք չի հասկանում: Վոմանք մտածում են միջակի հետ համաձայնութիւն հաստատել՝ կուսակցութեան դեմ պայքար մղելուց հրաժարվելու միջոցով կամ այդ պայքարը թուլացնելու միջոցով. իբր թե՛ կուսակցութեան դեմ մղվող պայքարը կարող է խրտնեցնել միջակիների մի մասին, նրա ունևոր մասին: Մյուսները մտածում են միջակի հետ համաձայնութիւն կայացնել չքափորութեան կազմակերպման աշխատանքից հրաժարվելու միջոցով կամ այդ աշխատանքը թուլացնելու միջոցով. իբր թե՛ չքափորութեան կազմակերպումը տանում է դեպի չքափորութեան առանձնացում, իսկ առանձնացումը կարող է մեղանից խրտնեցնել միջակիներին: Ճիշտ գծից կատարվող այս շեղումների հետևանքով ստացվում է այն մարքսիստական դրուձի մոռացումը, վոր միջակը տատանվող դասակարգ է, վոր միջակի հետ հաստատվող համաձայնութիւնը

կարելի յե ամուր դարձնել, յեթե կուլակութեան դեմ վրձնական պայքար մղվի և աշխատանքը չքափորութեան մեջ ուժեղացվի, վոր առանց այս պայմանների միջակը կարող ե տատանվել-թեքվել դեպի կուլակութեանը, վորպես դեպի մի ուժ: Վերհիշեցեք Լենինի խոսքերը, վոր նա ասել է կուլակցութեան VIII համագումարում.

«Անհրաժեշտ է վորոշել վերաբերմունքը դեպի այն դասակարգը, վորը վարք կայուն դրութիւն չունի: Պրոլետարիատը մասսայորեն սոցիալիզմի կողմն է, բուրժուազիան մասսայորեն սոցիալիզմին դեմ է. այս յերկու դասակարգերի միջև հարաբերութեանը վորոշելը հնչում է: Իսկ յերբ մենք անցնում ենք այնպիսի մի խափ, ինչպիսին միջակ դասակարգութեանն է, ապա բանից դուրս է դալիս, վոր սա մի այնպիսի դասակարգ է, վորը տատանվում է: Նա մասամբ սեփականատեր է, մասամբ՝ աշխատավոր: Նա չի շահագործում աշխատավորների ավանդակայացուցիչներին: Հարկ է յեղել, վոր նա տամնամյակներ շարունակ մեծազույն աշխատանքով պաշտպանի իր դրութեանը, նա իր վրա զդացել է կալվածատերերի ու կապիտալիստների շահագործումը, նա կրել է ամեն ինչ, և միևնույն ժամանակ նա սեփականատեր է: Այս պատճառով՝ մեր վերաբերմունքը դեպի այս տատանվող դասակարգը հսկայական դժվարութեաններ է ներկայացնում» («Ռեկի VIII համագումար», սղագիր հաշվեալութեան, էջ 346):

Բայց լինում են ճիշտ գծից ուրիշ շեղումներ ել, վորոնք պակաս վտանգավոր չեն, քան նախորդները: Պատահում է, վոր կուլակութեան դեմ պայքար մղում են, բայց այնպես անշնորհք ու անհեթեթ կերպով են մղում, վոր հարվածներն իջնում են միջակի ու չքափորի վրա: Հետևյալն այն է լինում, վոր կուլակը վողջ-առողջ է մնում, միջակի հետ դաշինք հաստատելու գործը ճեղքվածք է ստանում, իսկ չքափորութեան մի մասը ժամանակավորապես ընկնում է կուլակի ճանկը, վորն ականահատման (БОРЬБА) պայքար է մղում խորհրդային քաղաքականութեան դեմ: Այնպիսի դեպքեր ել են լինում, յերբ կուլակութեան դեմ մղվող պայքարը փորձում են վերածել կուլակաթափման, իսկ հացամթերման աշխատանքը—պարենամանատրման՝ մուսանալով, վոր կուլակաթափումը մեր պայմաններում հի-

մարութեանն է, իսկ պարենամանատրումը նշանակում է վո՛չ թե դաշինք միջակի հետ, այլ պայքար նրա դեմ:

Ինչի՞ց են առաջ դալիս կուլակցական գծից կատարվող այս շեղումները:

Այն բանը չհասկանալուց, վոր գյուղում կատարվող կուլակցական աշխատանքի յեռյակ խնդիրը միասնակա՞ն ու անբաժան խնդիր է: Այն բանը չհասկանալուց, վոր կուլակութեան դեմ պայքարելու խնդիրը չի կարելի անջատել միջակի հետ համաձայնութեան կայացնելու խնդրից, իսկ այս յերկու խնդիրները—չքափորութեանը գյուղում կուլակցութեան հենարանի վերածելու խնդրից¹:

1 Սրանից հետևում է, վոր ճիշտ գծից կատարվող շեղումները յերկու տեսակի վտանգ են ստեղծում բանվորների ու դուրապիներին գաշինքի գործի համար. վտանգ նրանց կողմից, ովքեր մտածում են, սենք, հացամթերման ժամանակավոր արտակարգ ձեռնարկումները կուլակցութեան մշտական կամ տեղական կուրսի վերածել, և վտանգ նրանց կողմից, ովքեր մտածում են արտակարգ ձեռնարկումները վերացումն ողտոտութեան կուլակին սանձալուծ անելու համար, առևտրի լիակատար պատուութեան հայտարարելու համար՝ առանց պետութեան որդանների կողմից առևտուրը կարգավորելու: Այս պատճառով՝ ճիշտ գիծն ապահովելու համար անհրաժեշտ է պայքար մղել յերկու ճակատի վրա:

Ողտուում եմ առիթից՝ նշելու, վոր մեր մասնուր միշտ չե, վոր պահպանում է այս կանոնը, յերբեմն ցուցարներելով վորոշ միակողմնութեան: Պատահում է, որինակ, վոր մերկացնում են նրանց, ովքեր ցանկանում են հացամթերումների արտակարգ ձեռնարկումները, վորոնք ժամանակավոր բնույթ ունեն, վերածել մեր քաղաքականութեան մշտական կուրսի՝ սպառնալիք ստեղծելով գողման համար: Այդ շատ լավ է: Բայց վատ է և ճիշտ չե, յերբ սրա հետ միաժամանակ բավականաչափ ուշադրութեան չեն նվիրում ու ինչպես հարկն է չեն մերկացնում նրանց, ովքեր սպառնում են գողմանը մյուս կողմից, չեն մերկացնում նրանց, ովքեր անձնատուր են լինում մանր-բուրժուական տարերքին, պահանջում են գյուղի կապիտալիստական տարրերի դեմ մղվող պայքարը թուլացնելու առևտրի լիակատար ազատութեան սահմանել՝ առանց պետութեան կարգավորող գերի, այսպիսով խաբելելով գողումը մյուս ծայրից: Այս արդեն վատ է: Այս միակողմնութեանն է (ОДНОКОСТЬ):

Լինում է նաև այն, վոր մերկացնում են նրանց, ովքեր ժխտում են, սենք, ալյակ ստադիայում գյուղատնտեսութեան բազա հանդիսացող անհատական մանր ու միջակ գյուղացիական տնտեսութեանների բարձրացման հնարավորութեանն ու նպատակահարմարութեանը: Այս շատ լավ է: Բայց վատ է և ճիշտ չե, յերբ սրա հետ միաժամանակ չեն

1 Բնորոշումն իմն է: Ի. Սոս.:

Ի՞նչ պետք է անել, վորպեսզի այս խնդիրները միմյան-
ցից շանջատվեն գյուղում կատարվող մեր ընթացիկ աշխա-
տանքի ժամանակ:

Դրա համար հարկավոր է, առնվազն, տալ այնպիսի գե-
կավար լոգունգ, վորն այդ բոլոր խնդիրները միավորներ մի
ընդհանուր ֆորմուլայի մեջ, վորը (լոգունգը), հետևաբար,
Թուշլ չտար, վոր այդ խնդիրներն իրարից անջատվեն:

Այդպիսի ֆորմուլա, այդպիսի լոգունգ արդյոք կա՞
մեր կուսակցական զինանոցում:

Այո՛, կա: Այդպիսի ֆորմուլա յե հանդիսանում Լենին-
նի լոգունգը՝ «կարողանալ համաձայնության հասնել միջակ
գյուղացու հետ՝ վոչ մի բույս չհրաժարվելով կուլակի գեմ
պայթարելուց ու ամրապես հենվելով միայն չքավորության
վրա»:

Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր այս լոգունգն ա-
մենից ավելի նպատակահարմար ու համապարփակ լոգունգն
է, վոր այն հարկավոր է առաջին պլանը քաշել հեեց այժմ,
գյուղում կատարվող աշխատանքի հեեց տվյալ պայմաննե-
րում:

Դուք Լենինի լոգունգն «ոպոզիցիոն» լոգունգ եք հա-
մարում ու հարցնում եք ձեր նամակում. «Ի՞նչպես կարող եր
պատահել, վոր... այդ ոպոզիցիոն լոգունգը սոպվել է 1928
թվականի մայիսի 1-ին «Правда»-յում... Ինչո՞վ կարելի յե
բացատրել այդ լոգունգի լույս տեսնելը Համկկ կկ-ի որգան
«Правда»-յի եջերում, արդյոք այդ լույ տեսնիկակա՞ն վրի-
պակ է, թե այդ կոմպրոմիս է ոպոզիցիայի հետ՝ միջակի
հարցում»: Ինչ ասել կուզի՝ ահավոր է սոպած: Բայց և
այնպես՝ ավելի գգույշ «չըջաղարձերում», ընկ. Ս., չլինի

մերկացնում նրանց, ովքեր նսեմացնում են կոլտնեսուլթյունների ու
խորհտնեսուլթյունների նշանակութունը և չեն տեսնում այն բանը,
վոր անհատական մանր ու միջակ գյուղացիական տնտեսության բարձ-
րոցման խնդիրը պետք է գործնականորեն լրացվի կոլտնեսուլթյուն-խորհ-
տնեսուլթյան շինարարության բարձրացման խնդրով: Այս արգեն միակու-
յություն է:

ձիջա դիժն սոպածովելու համար հարկավոր է պայթար մղել յեր-
կու նակատի վրա ու դեն գցել ամեն մի միակույթյուն:

Թե հանկարծ հարկ լինի, վոր դուք, ձեր կայտառությամբ,
դաք այն յեղրակացության, վոր հարկավոր է արգելել մեր
ծրագրի սոպաղորությունը, ծրագիր, վորն ամբողջությամբ
հաստատում է Լենինի լոգունգը (փա՛ստ է), հիմնականում
մշակվել է Լենինի կողմից (բնա՛ջ յերբեք ոպոզիցիոններ չէ)
և ընդունված է կուսակցության VIII համադումարի կողմից
(կուսակցության, վորը նո՛ւյնպես ոպոզիցիոն չէ): Ավելի
չա՛տ հարգանք մեր ծրագրի հայտնի կետերին, վոր վերա-
բերում են գյուղում յեղած սոցիալական խմբավորումնե-
րին: Ավելի չա՛տ հարգանք մեր կուսակցության VIII հա-
մադումարի կողմից միջակ գյուղացիության մասին ընդուն-
ված վճիռներին... Ինչ վերաբերում է «կոմպրոմիս ոպո-
զիցիայի հետ միջակի հարցում» ձեր Փրազին, ապա այն,
այդ Փրազը, յես կարծում եմ, արժանի չէ, վոր այն հեր-
քեն՝ դուք, թերես, տաքացած վիճակում եք ասել այն:

Չեղ, կարծես, չփոթեցնում է այն հանդամանքը, վոր
Լենինի լոգունգի մեջ և Համկկ ծրագրի մեջ, վորն ընդուն-
վել է VIII համադումարում, խոսվում է միջակի հետ հա-
մաձայնություն կայացնելու մասին, մինչդեռ VIII համա-
դումարի բացման ժամանակ արտասանած իր ճառում Լենին-
ը խոսում է միջակի հետ հաստատուն դաշինք կնքելու մա-
սին: Դուք սրա մեջ, թերես, հակասության պես ինչ-վոր
բան եք տեսնում: Դուք, հնարավոր է, մինչև իսկ հակամեա
եք յենթադրելու, վոր միջակի հետ համաձայնություն կա-
յացնելու քաղաքականությունը ինչ-վոր նահանջի պես մի
բան է նրա հետ դաշինք կնքելու քաղաքականությունից:
Այդ ճիշտ չէ, ընկ. Ս.: Այդ մեծ մոլորություն է: Այդպես
կարող են մտածել միայն այնպիսի մարդիկ, ովքեր կարո-
ղանում են կարդալ լոգունգի տառերը, բայց չեն կարողա-
նում լոգունգի իմաստը թափանցել: Այդպես կարող են
մտածել այնպիսի մարդիկ, վորոնք չզիտեն միջակի հետ
դաշինք կնքելու, համաձայնություն կայացնելու վերաբե-
րյալ լոգունգի պատմությունը: Այդպես կարող են մտածել
միայն այն մարդիկ, վորոնք ընդունակ են յենթադրելու,
թե Լենինը, վորը VIII համադումարում արտասանած իր նե-
րածական ճառի մեջ հայտարարել է միջակի հետ «հաստա-

տուն դաշինքի» քաղաքականություն վարելու մասին, նա-
հանջ է կատարել ինքն իրենից՝ ասելով նույն այդ համա-
գումարում արտասանած իր մեկ ուրիշ ճառում և VIII Հա-
մագումարում ընդունված՝ կուսակցության ծրագրի մեջ,
վոր մեզ այժմ միջակի հետ «համաձայնություն» կայացնե-
լու քաղաքականություն է հարկավոր:

Բանն ինչո՞ւմն է այստեղ: Բանը նրանումն է, վոր Լե-
նինն ու կուսակցությունը հանձին VIII համագումարի վոչ
մի տարրերուքյուն չեն տեսնում «համաձայնություն» հաս-
կացողության և «դաշինք» հասկացողության միջև: Բանը
նրանումն է, վոր ամենուրեք, VIII համագումարում ար-
տասանած իր բոլոր ճառերում, Լենինը հավասարուքյուն
նշան է դնում «դաշինք» հասկացողության և «համաձայնու-
թյուն» հասկացողության միջև: Նույն այդ բանը պետք է
տեսել VIII համագումարի «դեպի միջակ գյուղացին ունենալիք
վերաբերմունքի մասին» բանաձևի նկատմամբ, վորտեղ
«համաձայնություն» հասկացողության և «դաշինք» հասկա-
ցողության միջև հավասարուքյուն նշան է դրվում: Յեւ
քանի վոր Լենինն ու կուսակցությունը միջակի հետ համա-
ձայնություն պահպանելու քաղաքականությունը համարում
են վո՛չ թե պատահական ու փութանցիկ, այլ տևական քա-
ղաքականություն, նրանք ունեյին և ունեն բոլոր հիմունք-
ները՝ միջակի հետ համաձայնություն պահպանելու քաղա-
քականությունը նրա հետ հաստատուն դաշինք կնքելու քա-
ղաքականություն անվանելու և, ընդհակառակը, միջակի հետ
հաստատուն դաշինք պահպանելու քաղաքականությունը՝
նրա հետ համաձայնություն պահպանելու քաղաքականու-
թյուն: Բավական է ծանոթանալ կուսակցության VIII հա-
մագումարի սղագիր հաշվետվությանը և նույն համագու-
մարի՝ միջակի վերաբերյալ բանաձևին, վորպեսզի համոզ-
վենք սրանում:

Ահա մի քաղվածք VIII համագումարում Լենինի արտա-
սանած ճառից.

«Մենուրեք խորհրդային աշխատողների անփորձության շնորհիվ,
հարցի դժվարության շնորհիվ այն հարվածները, վորոնք նախանշված
էին կուսակների համար, իջնում էին միջակ գյուղացիության վրա:

Այսպեղ մենք չափազանց մեղանչել ենք: Սրա վերաբերյալ հափառած
փորձը կողմի մեղ անելու ամեն բան, վորպեսզի դրանից խուսափենք
հետագայում: Ահա մի խնդիր, վոր կանգնած է մեր առջև վո՛չ թե
թերեքայեա, այլ զործնականապես: Դուք հիանալի դիտե՛ք, վոր այս
խնդիրը դժվար խնդիր է: Մենք չունենք այնպիսի բարիքներ, վոր կա-
բող լինեյինք առ միջակ գյուղացուն, իսկ նա մատերիավետ, պրակ-
տիկ է ու պահանջում է կոնկրետ նյութական բարիքներ, վոր մենք այժմ
չենք կարող առ և առանց վորոնց յերկիրը պետք է յուր դեմ, դուցե,
եյի ամիսներ տևող այն ծանր պայքարի ընթացքում, վորն այժմ լիա-
կատար հաղթություն է խոստանում: Բայց մենք կարող ենք շատ բան
անել մեր վարչական պրակտիկայում—բարելավել մեր աղարտուք, ուղ-
ղել բազմաթիվ շարահիւսումներ: Մենք կարող ենք մեր կուսակցության
դեմք, վորը բավարար չափով չի գնացել դեպի բլսկ, դեպի քաշիմֆ,
դեպի համաձայնություն միջակ գյուղացիության հետ, մենք կարող
ենք և պետք է ուղղենք ու շակենք այդ դեմք» («Ռեկ VIII համագու-
մար», սղագիր հաշվետվություն, էջ 24—25):

Դուք տեսնում եք, վոր Լենինը տարբերություն չի
դնում «համաձայնության» ու «դաշինքի» միջև:

Ահա և քաղվածքներ VIII համագումարի՝ «Դեպի միջակ
գյուղացիությունն ունենալիք վերաբերմունքի մասին» բա-
նաձևից.

«Միջակ գյուղացիներին շփոթել կուսակցության հետ, այս կամ այն
չափով նրանց վրա տարածել կուսակցության դեմ ուղղված միջոցառում-
ները, նշանակում է ամենակոպտ, կերպով խախտել վո՛չ միայն խոր-
հրդային իշխանության բոլոր դեկրետներն ու նրա ամբողջ քաղաքակա-
նությունը, այլև կոմունիզմի բոլոր հիմնական սկզբունքները, վորոնք
բուրժուազիային տաղաչելու համար պրոլետարիատի մղած վճռական
պայքարի ժամանակաշրջանում պրոլետարիատի կողմից միջակ գյուղա-
ցիության հետ կնքելիք համաձայնությունը մատնանշում են վորպես
ամեն մի շահագործման վերացման անհիմնադադին կերպով անցնելու
պայմաններից մեկը:

Միջակ գյուղացիությունը, վոր համեմատաբար ամուր անտեսական
արժատներ ունի, շնորհիվ այն բանի, վոր գյուղատնտեսական տեխնի-
կան հետ է մնում արդյունաբերականից մինչև անդամ առաջավոր կապի-
տալիստական յերկրներում, և չենք խոսում Ռուսաստանի մասին—
պրոլետարական հեղափոխության սկսվելուց հետո էլ բավական յերկար
ժամանակ կըլիմանա: Ուստի խորհրդային աշխատողների, ինչպես նաև
հավասարապես կուսակցության դործիչների տակտիկական դուրսում պետք
է կառուցել միջակ գյուղացիության հետ տևական ժամանակաշրջանով
գործակցություն ունենալու հաշվով...

... Խորհրդային իշխանութեան միանդամայն ճիշտ քաղաքականութեանը գյուղում ազատութեամբ է, այսպիսով, հաղթական պրոլետարիատի դաշինքն ու համաձայնութիւնը միջակ գյուղացիութեան հետ...

... Բանվոր-գյուղացիական կառավարութեան ու կոմունիստական կուսակցութեան քաղաքականութեանն այսուհետեւ էլ պետք է տարբեր պրոլետարիատի ու ամենաչքայոր գյուղացիութեան կողմից միջակ գյուղացիութեան հետ համաձայնութիւն ունենալու այս վնգով¹ (Ռեկի VIII համագումար, սղադեր հաշվետուութիւն, էջ 417—420):

Ինչպես տեսնում եք, բանաձևը նույնպես տարբերութիւն չի դնում «համաձայնութեան» ու «դաշինքի» միջև:

Ավելորդ չի լինի նկատել, վոր VIII համագումարի այս բանաձևում չկա և վոչ մի խոսք միջակի հետ «հաստատուն դաշինք» ունենալու մասին: Մակայն արդոք այդ նշանակում է, վոր բանաձևը դրանով էլ հենց նախանշում է միջակի հետ «հաստատուն դաշինքի» քաղաքականութիւնից: Վո՞չ, չի նշանակում: Մա լոկ այն է նշանակում, վոր բանաձևը համապարտութեան նշան է դնում «համաձայնութիւն», «գործակցութիւն» հասկացողութեան ու «հաստատուն դաշինք» հասկացողութեան միջև: Յեւ այդ հասկանալի յե. չի կարող միջակի հետ «դաշինք» լինել առանց նրա հետ «համաձայնութիւն» լինելու, իսկ դաշինքը միջակի հետ չի կարող «հաստատուն» լինել, յեթե չկա «տեսական» համաձայնութիւն ու գործակցութիւն նրա հետ:

Մրանք են փաստերը:

Յերկուսից մեկը. կա՛մ Լենինն ու կուսակցութեան VIII համագումարը նախանշել են միջակի հետ «հաստատուն դաշինք» ունենալու վերաբերյալ լենինյան հայտարարութիւնից, կա՛մ հարկավոր է դեն դրել այս անլուրջ յենթադրութիւնը և ընդունել, վոր Լենինն ու կուսակցութեան VIII համագումարը վոչ մի տարբերութիւն չեն դնում «համաձայնութիւն» հասկացողութեան և «հաստատուն դաշինք» հասկացողութեան միջև:

Այսպես ուրեմն, ով չի ցանկանում դատարկ տառակիութեան զոհ լինել, ով ցանկանում է թափանցել լենինյան այն լոզունգի իմաստը, վորը խոսում է չքայորութեան վրա հենվելու մասին, միջակի հետ համաձայնութիւն ունենալու

և կուլակիութեան դեմ պայքարելու մասին, — նա չի կարող հասկանալ, վոր միջակի հետ համաձայնութիւն ունենալու քաղաքականութիւնը նրա հետ հաստատուն դաշինք ունենալու քաղաքականութիւն է:

Ձեր սխալն այն է, վոր դուք չեք հասկացել սպողիցիայի ժուլիկական արարքը ու յենթարկվել էք նրա պրովոկացիային՝ ձեզ դրելով այն թակարդը, վոր հակառակորդը դրել էր ձեզ համար: Ոպողիցիոն ժուլիկներն աղաղակում ու աղմկում են՝ հավատացնելով, վոր իրենք կողմնակից են միջակի հետ համաձայնութիւն ունենալու վերաբերյալ Լենինի լոզունգին, ընդվորում նրանք պրովոկատորական ակնարկ են անում այն մասին, թե «համաձայնութիւնը» միջակի հետ — մի բան է, իսկ «հաստատուն դաշինքը» նրա հետ — մի ինչ-վոր ուրիշ բան: Սրանով նրանք ցանկանում են յերկու նապաստակ սպանել. նախ՝ թագցնել իրենց իսկական դիրքը միջակ գյուղացիութեան վերաբերմամբ, մի դիրք, վորը վո՞չ թե համաձայնութիւն է միջակի հետ, այլ «զրմտութիւն է միջակի հետ» (տե՛ս սպողիցիոններ Մմիրնովի հայտնի ճառը, վորից յես մեջբերումներ եմ արել Մոսկվայի նահանգական XVI կուսկոնֆերենցիայում), յերկրորդ՝ «համաձայնութեան» ու «դաշինքի» կարծեցյալ տարբերութեամբ վորսալ բոլշևիկներին մեջ յեղած պարզամիտներին ու վերջնականապես շփոթեցնել նրանց՝ դեն հրելով նրանց Լենինից:

Իսկ ի՞նչ են անում մեր ընկերներից վոմանք սրան իբրև պատասխան: Փոխանակ սպողիցիոն խարդախիչների դիմակը պոկելու, փոխանակ մերկացնելու նրանց այն բանում, վոր նրանք կուսակցութեանը խարում են իրենց իսկական դիրքի վերաբերմամբ, — սրա փոխարեն նրանք կարթվում են, իրենց վոտքով թակարդ են ընկնում և թույլ են տալիս, վոր իրենց դեն հրեն Լենինից: Ոպողիցիան աղմուկ է հանում Լենինի լոզունգի առթիվ, սպողիցիոնները լենինյան լոզունգի կողմնակիցներ են ձևացնում իրենց, — ուրեմն յես պետք է սահմանաձրվեմ այդ լոզունգից, վորպեսզի ինձ սպողիցիայի հետ չշփոթեն, այլապես ինձ կարող են մեղադրել «սպողիցիայի հետ կոմպրոմիսի մեջ մըտ-

¹ Ընդգծումներն ամենուրեք իմն են: Ի. Ստ.:

նելու» համար, — ա՛յս է այդ ընկերների արամարանությու-
նը:

Յե՛ւ սա ուղղիցիայի ժուլիկական պրիմների միակ ո-
րինակը չէ: Վերջրեք, որինակ, ինքնաքննադատության լո-
զունդը: Բոլշևիկները չեն կարող չիմանալ, վոր ինքնաքն-
նադատության լոզունգը մեր կուսակցական գործողության
հիմքն է, պրոլետարական ղեկատուութեամբ ամբապնդման
միջոցը, կադրերի դաստիարակման բոլշևիկյան մեթոդի
հողին: Ուղղիցիան աղմուկ է բարձրացնում, համատացնե-
լով, թե ինքնաքննադատության լոզունգն ինքը, ուղղիցիան
է հնարել, վոր կուսակցությունը խլել է նրանից այդ լո-
զունգը և, այդպիսով, անձնատուր է յեղել ուղղիցիայի
հանդեպ: Այսպես վարվելով՝ ուղղիցիան ցանկանում է
ձեռք բերել զոնն յերկու բան. նախ՝ թաղցնել բանվոր դա-
սակաբզից ու խաբել նրան այն բանում, վոր կուսակցակա-
նությունը կործանելու նպատակ ունեցող ուղղիցիան ինքնա-
քննադատության և կուսակցականությունը ամբացնելու
նպատակ ունեցող բոլշևիկյան ինքնաքննադատության միջև
անբունդ կա. յերկրորդ՝ կարթել պարզամիտներից վոմանց
ու հարկադրել նրանց, վոր սահմանաժողովն ինքնաքննադա-
տության վերաբերյալ կուսակցական լոզունգից:

Իսկ ի՞նչ վերաբերմունք են ցույց տալիս այս բանին
մեր միջանի ընկերները: Ուղղիցիային պատկանող խար-
դախների դիմակը պատռելու և բոլշևիկյան ինքնաքննադա-
տության լոզունգը պաշտպանելու փոխարեն, — նրանք իրենց
փոաքով թակարդ են ընկնում, հետ են հրվում ինքնաքննա-
դատության լոզունգից, ուղղիցիայի դուրուկով են պարում
և... անձնատրվում են նրա հանդեպ, սխալբար յենթա-
դրելով, թե սահմանաժողովում են ուղղիցիայից:

Այսպիսի որինակների մի ամբողջ կույտ կարելի յեր բե-
րել:

Բայց մենք մեր աշխատանքի մեջ վոչ մեկի դուրուկով
չենք կարող պար դալ: Առավել ևս մեր աշխատանքում մենք
չենք կարող ղեկավարվել նրանով, ինչ ուղղիցիաներեն են
ասում մեր մասին: Մենք պետք է զնանք մեր ճանապարհով՝

դեն չպրտելով թե՛ ուղղիցիայի ժուլիկական արարքները,
թե՛ ուղղիցիաներեն պրոփոկացիային յենթարկվող մեք
բոլշևիկներից վոմանց սխալները: Հիշեցեք Մարքսի խոսքե-
րը. «Գնա՛ քո ճանապարհով, իսկ մարդիկ ինչ ուզում են,
թող ասեն»:

12 հուլիսի 1928 թ.
„Սրաքա“ № 152,
3 հուլիսի 1928 թ.:



Հայերեն թարգմանությունը լամբազրեց Բ. Մարտիրոսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբազրիչ Հ. Մանվելյան
Կոնտրոլ սրբազրիչ Լ. Արսվյան

Դրավիտի լրացր Ա 1902, հրատ. Ա 612,
Պատվեր Ա 162, տիրաժ 5.000
Հանձնվել է արտադրության 21/XI 1938 թ.
Ստորագրվել է տպագրելու 29 XI 1938 թ.
Դինը 20կ, կազմը 30 կ.

Պետհրատ—Բաղաբական գրականության
հրատարակչության տպարան, Յերևան, 1938

ՀՀ Ազգային գրադարան



NL0174928

598 ✓

ԳԻՆԸ 50 Կ.

И. СТАЛИН

ЛЕНИН И ВОПРОС О СОЮЗЕ
С СЕРЕДНЯКОМ

Армгиз—Издательство полит, литературы
Ереван, 1938